ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 21.06.2014Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ /ՀՕ-67-Ն/ ԵՎ ԿԻՑ ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն ԵՎ ՀՕ-77-Ն ՕՐԵՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՂ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների՝ 2014թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի նախնական ուսումնասիրման արդյունքներով ՀՀ սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հաշվառմամբ՝ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.06.2014թ. ընդունված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը /ՀՕ-67-Ն/ եւ կից ՀՕ-68-Ն, ՀՕ-69-Ն, ՀՕ-70-Ն, ՀՕ-71-Ն, ՀՕ-72-Ն, ՀՕ-73-Ն, ՀՕ-74-Ն, ՀՕ-75-Ն, ՀՕ-76-Ն եւ ՀՕ-77-Ն օրենքները, ինչպես նաեւ դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 10-րդ հոդվածները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին» գործն ընդունել քննության:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով գործի դատաքննությունն սկսել 2015թ. մարտի 31-ին, ժամը 11.00-ին, գործի դատաքննությունը կազմակերպել գրավոր ընթացակարգով, գործով զեկուցողներ նշանակել սահմանադրական դատարանի անդամներ Վ. Հովհաննիսյանին եւ Կ. Բալայանին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել վիճարկվող ակտերն ընդունած պետական մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

4. Գործի նյութերը տրամադրել նաեւ ՀՀ կառավարությանը՝ պահանջելով երկամսյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարանին պարզաբանումներ ներկայացնել դիմումում եւ կից փաստաթղթերում առաջ քաշվող սահմանադրաիրավական բնույթի հիմնախնդիրների եւ առկա իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ:

5. Անհրաժեշտության դեպքում դիմումի ապահովման մասով դիմողների խնդրանքին անդրադառնալ սույն որոշման հիման վրա ՀՀ կառավարության կողմից ներկայացվելիք նյութերն ուսումնասիրելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

4 նոյեմբերի 2014 թվականի
ՍԴԱՈ-55